


Պաշլամենտարիզմը Հին Հռոմում

Մանուկյան Մարտին Ա.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու,
իրավաբանական գիտությունների թեկնածու, իրավագիտության ամբիոնի դասախոս,
Երևանի «Գլաձոր» համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-3636-6701>
martin_manukyan_1955@mail.ru

ՀՏԳ՝ 342; EDN: OI DCSY

DOI: 10.58587/18292437-2025.4-40

Հանգուցարաներ և բառակապակցություններ, սենատ, սենատորներ, կուրիաներ, պլեբեյներ, պատրիկներ, պրետոր, ժողովրդական տրիբուն, կայսր, պրովինցիաներ

Парламентаризм в Древнем Риме

Манукян Мартин А.

*Ответственный за мониторинг работы Аппарата Народного Защитника Палаты адвокатов РА,
кандидат юридических наук, преподаватель кафедры юриспруденции,
Ереванский университет "Гладзор" (Ереван, РА)*

Аннотация Римское государство является последним государством рабовладельческого общества. Рабовладельческая общественно-экономическая формация достигла пика своего развития в Римском государстве. Это государство за свою более чем тысячелетнюю историю имело разные формы правления: республику и монархию. Рим трижды навязывал миру свою волю, трижды создавал единство народов. В первый раз это единство выразилось в Римском государстве, во второй раз в Римско-католической церкви, в третий раз в праве в результате рецепции (подражания).

Рим, как рабовладельческое государство, вышел на историческую арену позже и создал более совершенные по форме рабовладельческие отношения. Римское право действовало в Италии, Испании, Франции, Византии в период феодальных общественных отношений. А в Германии сборник законов Юстиниана прекратил свое действие только в 1900 году.

Ключевые слова и словосочетания: Сенат, сенаторы, курии, плебеи, патриции, претор, народный трибун, император, провинции

Parliamentarism in Ancient Rome

Manukyan Martin A.

*Responsible for monitoring the work of the Office of the Public Defender of the Chamber of Advocates of the
Republic of Armenia,
Candidate of legal sciences, Lecturer of the Department of Jurisprudence of,
Yerevan University "Gladzor" (Yerevan, RA)*

Abstract. The Roman state is the last state of the slave-owning society. The slave-owning social and economic formation reached the peak of its development in the Roman state. That state had different forms of government during its more than thousand-year history: republic and monarchy. Rome imposed its will on the world three times, three times created a unity of peoples. The first time this unity was expressed in the Roman state, the second time in the Roman Catholic Church, the third time in law as a result of reception (imitation).

Rome, as a slave state, entered the historical arena later and created more perfect slave relations in form. Roman law operated in Italy, Spain, France, and Byzantium during the feudal social relations. And in Germany, the collection of Justinian's laws only ceased to operate in 1900.

Keywords and phrases: senate, senators, curiae, plebeians, patricians, praetor, people's tribune, emperor, provinces

Հռոմեական պետությունը ստրկատիրական հասարակարգի վերջին պետությունն է: Ստրկատիրական հասարակական տնտեսական ֆորմացիան հռոմեական պետությունում հասավ իր զարգացման զագաթնակետին: Այդ պետությունն ավելի, քան հազարամյա պատմության ընթացքում ունեցել է կառավարման տարբեր ձևեր՝ հանրապետություն և միապետություն:

Հռոմը երեք անգամ իր կամքը թելադրեց աշխարհին, երեք անգամ ստեղծեց ժողովուրդների միասնություն: Առաջին անգամ այդ միասնությունն արտահայտվեց հռոմեական պետությունում, երկրորդ անգամ՝ հռոմեա-կաթոլիկ եկեղեցում, երրորդ անգամ՝ իրավունքում՝ ռեցեպցիայի (ընդօրինակման) հետևանքով:

Հռոմը որպես ստրկատիրական պետություն, պատմական ասպարեզ իջավ ավելի ուշ և ստեղծեց ձևով առավել կատարելագործված ստրկատիրական հարաբերություններ: Հռոմեական իրավունքը Ֆեդդալական հասարակական հարաբերությունների ժամանակ գործեց Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Բյուզանդիայում: Իսկ Գերմանիայում Հուստինիանոսի օրենքների ժողովածուն միայն 1900 թ. դադարեց գործել:

Հռոմում ներկայացուցչական մարմիններն առաջացել են հին կուրիատական կոմիտիաների հիման վրա (comitia curiata), [1, էջ 603] որոնցում, ըստ կուրիաների, հավաքվում և համայնքի պաշտամունքի, ընտանեկան հարաբերությունների և ունեցվածքի առնչությամբ հարցերով գրադվում էին բոլոր չափահաս տղամարդիկ: Նրանք էին ընտրում «թագավորին» (rex), որն իրականում ավելի շատ ռազմական առաջնորդ էր, քան միապետ, քանզի, նրա իշխանությունը սահմանափակված էր սենատի (senatus) կողմից:

Սենատի անվան ծագումն ինքնին հետաքրքիր է՝ այն բխում է senex (ծեր մարդ) բառից: Ըստ ամենայնի, սկզբում սենատը բաղկացած էր տոհմերի ծերերից: Ուստի, սենատի անդամներին, որոնք կարող էին լինել 100-ից մինչև 300 հոգի, կոչում էին «հայրեր» (patres), իսկ նրանց սերունդներին՝ patricii (պատրիկիներ, այսինքն՝ նրանք, ովքեր «հայր» ունեն)՝ ի տարբերություն պլեբեյների, ովքեր չունեին տոհմային ծագում և չէին դիտվում որպես «խկական» հռոմեացիներ:

Կուրիատական կոմիտիաների բոլոր որոշումները պետք է հաստատվեին սենատի կողմից, որը համարվում էր «հայրական ավանդույթների» պահպան և թագավորի բարձրագույն խորհրդատվական մարմինը [2, էջ 126]:

Տիրոս Լիվիոսի նկարագրած պատմությունը մ.թ.ա. 492. պլեբեյների «սեցեսիայի» (հրաժարումը ծառայել քաղաքին և կազմակերպված ելքը քաղաքից՝ գեներով) մասին, երբ նրանք ի նշան բողոքի հեռացան Հռոմից և շարժվեցին դեպի Մուրբ Լեո, պատմության մեջ համարվում է զանգվածային քաղաքական ակտիվության աննախադեպ օրինակ: Այդ կազմակերպված անհնազանդության արդյունքում իշխանությունները հարկադրված եղան զիջումներ անել:

Պլեբեյներին առաջին նշանակալի զիջումը եղավ պլեբեյական տրիբունների (tribuni plebis) պաշտոնի ստեղծումը մ.թ.ա. 494 թ.: Սկզբում ընտրվեցին երկու, ապա չորս և տաս տրիբուններ, որոնք դարձան պլեբեյների լիազորված պաշտպանները: Նրանք կարող էին վետո դնել ցանկացած որոշման վրա, որը վերաբերում էր պլեբեյներին (բացառությամբ ռազմական հրամանների): Ժողովրդի աջակցությունը տրիբուններին ուժեղացնում էր նրանց քաղաքական և

իրավական դիրքերը: Նրանք ստացան նաև օրենսդրական նախաձեռնության իրավունք՝ անկախ սենատից: Մ.թ.ա. 471 թ. հիմնվեցին պլեբեական ժողովներ (concordia plebis)՝ օրենսդրական լիազորություններով:

Այդպիսով, պլեբեյների խավը վերածվեց կազմակերպված քաղաքական ուժի՝ իր սեփական ժողովով և պաշտոնական ներկայացուցիչներով: Պլեբեյների կարգավիճակը մ.թ.ա. 449 թ. հանգեցրեց Հռոմում գրավոր օրենսդրության՝ Տասներկու աղյուսակների օրենքների մշակման արագացմանը: Օրենքների ընդունումը նշանավորում էր երկու խավերի համար ընդհանուր մասնավոր իրավունքի սահմանման անհրաժեշտությունը և դարձավ պլեբեական շարժման հերթական հաղթանակը:

Նույն այդ՝ մ.թ.ա. 449 թվականին, հռոմեացի կոնսուլներ Վալերիոսին ու Հորացիոսին հաջողվում է անցկացնել մի օրենք, ըստ որի պլեբեական ժողովների (պլեբիսցիտների) որոշումները, որոնք անցկացվում էին ըստ տրիբունների (վարչական շրջանների), ունեին համապետական օրենքի ուժ: Վալերիոսի օրոք ընդունվում է մի օրենք, ըստ որի Հռոմի քաղաքացին իրավունք էր ստանում բողոք ներկայացնել ժողովրդական ժողովին այն դեպքերում, երբ նրան ճնշում էին, կամ նրա նկատմամբ ապօրինի որոշումներ էին ընդունվում մագիստրատների կողմից: Հետագայում քաղաքացիները ստացան նաև տրիբունին դիմելու իրավունք: Պատրիկները ստիպված էին մասնակցել տրիբային ժողովներին (legislative) գործընթացի նկատմամբ վերահսկողությունը չկորցնելու համար: Այսպես ժողովրդավարացվում են ժողովրդական ժողովների ինստիտուտները, որոնք հետագայում ստացան տրիբունտային կոմիտիաներ անվանումը:

Ինչ վերաբերում է սենատին, ապա Հանրապետության դարաշրջանում դրա նշանակությունը ոչ միայն չէր նվազում, այլև ավելանում էր: Այդ մասին վկայում է այն խստացված կարգը, որով ընտրվում էին նրա անդամները: Սենատորների շարքում ընդգրկվում էին միայն բարձրագույն պաշտոնյաները՝ մագիստրատները, օրինակ՝ կոնսուլները, պրետորները և այլն: Սենատորների ցուցակը կոչվում էր *album senatorium*, և այն կազմվում էր հինգ տարին մեկ՝ խստորեն ըստ պաշտոնական աստիճանի: Ցուցակի առաջին տեղում գտնվող սենատորը կոչվում էր *princeps senatus*՝ սենատի առաջնորդ:

Սենատը փաստացիորեն դառնում է Հանրապետության բարձրագույն իշխանությունը, թեև ձևականորեն շարունակում էր համարվել մագիստրատների խորհրդատվական մարմին: Ժողովրդական ժողովները հազվադեպ էին գումարվում, մագիստրատները ընտրվում էին ընդամենը մեկ տարով, իսկ սենատում մշտապես գործում էին «ժողովրդի ներկայացուցիչները»:

Դառնալով տոհմային ու դրամական արխատուկրատիայի հենարան՝ սենատը մի քանի դար շարունակ դառնում է բախումների հարթակ պլեբեյների և ազնվականության (նոբիլների), իսկ հետո նաև նոբիլների և նորաստեղծ կայսրերի միջև:

Հռոմի ռազմական ընդլայնման հետ մեկտեղ, մեծանում էր հիմնականում պլեբեյներից կազմված բանակի դերը: Միաժամանակ ուժեղանում էր տրիբունների քաղաքական ազդեցությունը և իրավական կարգավիճակը, նրանց անձը, հագուստը և բնակավայրը համարվում էր սրբազան և անձեռմխելի (sacrosanctus), իսկ նրանց տունը կարող էր ծառայել որպես ապաստարան: Տրիբունների դեմ ոչ միայն թույլ չէր տրվում բռնություն գործադրել, այլև նրանց վրա հարձակվելը դիտվում էր որպես հանցագործություն: Նրանց կարևոր արտոնություններից մեկն այն էր, որ խոսելիս՝ նրանց չէր թույլատրվում ընդհատել: Եվ ամենակարևորը՝ նրանք ունեին վետոյի իրավունք՝ այսինքն, հնարավորություն ունեին կասեցնելու (բայց ոչ չեղարկելու) կոնսուլների հրամանները, սենատի որոշումները, օրենքների նախագծերը, քվեարկությունը ժողովներում: Տրիբունների իրավասությունները տարածվում էին նաև ռազմական ոլորտի վրա. մասնավորապես, նրանք կարող էին իրենց վետոյով կանխել գորքերի տեղափոխումը, վարել հետաքննություններ հրամանատարների գործողությունների վերաբերյալ: Վետոն կարող էր կիրառվել ինչպես տրիբունի անձնական նախաձեռնությամբ, այնպես էլ քաղաքացիների բողոքի (appellatio) հիման վրա: Ժողովրդի պահանջով (provocatio ad populum) տրիբունը կարող էր ձերբակալել ցանկացած պաշտոնյայի, նույնիսկ՝ կոնսուլին:

Այսպիսով, Հռոմեական Հանրապետության քաղաքական համակարգն ուներ իշխանության երկու բևեռ՝ քաղաքացիական, այսինքն՝ պլեբեյական, և սենատական՝ հիմնականում պատրիկական, ինչը յուրահատուկ ինքնուրույնություն էր հաղորդում այդ ժամանակի քաղաքական ինստիտուտներին:

Առանձնահատուկ պետք է նշել, որ ներքին քաղաքական պայքարի բոլոր շրջափուլերում սենատը մնում էր իշխանության գերագույն հաստատությունը, որը միավորում էր պետությունը և ղեկավարում էր ընդարձակվող տերության բոլոր կարևոր գործերը:

Իսկ ի՞նչ իրավասություններ ուներ այդ ժամանակվա սենատը: Հույն պատմիչ Պոլիբոսը գրում է. «Սենատը տնօրինում է ամենից առաջ գանձարանը. Նա է որոշում բոլոր եկամուտներն ու ծախսերը» [3, էջ 79]: Բվետտորները՝ գանձապահները, առանց սենատի որոշման իրավունք չունեին որևէ վճարում կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարումը կատարվում

էր կոնսուլների անունից: Սենատը ծրագրում էր նաև խոշոր հասարակական աշխատանքներ՝ հատկացնելով համապատասխան պայմանագրեր: Ներքին և արտաքին քաղաքականությունը, պետական անվտանգության հարցերը, կրոնը՝ բոլորը մտնում էին հանրապետական սենատի իրավասությունների շրջանակում:

Սովորաբար սենատի անդամ դառնում էին ոչ շուտ, քան 27-30 տարեկանում (երբեմն նույնիսկ միայն ծերության հասակում), և այդ պաշտոնը պահպանում էին ցմահ: Միայն խոշոր խախտումը կամ հանցագործությունը կարող էր հանգեցնել սենատից հեռացման: Ցեղգորը կարող էր պահանջել սենատորի հեռացումը, եթե վերջինս թաքցրել էր իր ցածր ծագումը, եղել էր անառակ, շռայլ կամ դրսևորել էր վախկոտություն մարտի դաշտում: Վտարված սենատորը կարող էր վերադառնալ սենատ, եթե երկրորդ անգամ զբաղեցներ պրետորի պաշտոնը:

Սենատորների «պաշտոնական զգեստը» բաց գույնի տոգաներն էին: Նրանք կրում էին սև կոշիկներ՝ պարանոցով (պերոններ) և լայն ժապավեններով կարված երկարաթև շապիկներ (կլավուսներ): Ինչպես Հորացիոսն է գրում՝ «Մե գոտիները մինչև կեսը փաթաթվում են սրունքներին, կրծքից իջնում է լայն կլավուսը»: Սենատորների կանայք և երեխաները նույնպես կարող էին զարդարվել ոսկե թագերով, իսկ որդիները կրում էին տոգա՝ մանուշակագույն եզրագծով:

Սենատորական արտոնություններ

Սենատորներն ունեին առանձնացված նիստերի դահլիճ՝ սենակուլում՝ Կապիտոլյան բլրի լանջին: Ֆորումի ստորոտում ելույթ ունեցող բանախոսները պարտավոր էին խոսել դեպի սենակուլը՝ ի նշան հարգանքի: Նրանց համար առանձին տեղեր կային թատերական ներկայացումներին, կրկեսում և խաղերին: Տարվա մեջ երկու անգամ՝ սեպտեմբերի 14-ին և նոյեմբերի 13-ին, սենատորները հանդիսավոր ճաշում էին Կապիտոլիումում՝ պետության հաշվին: Իսկական ճոխություն էր սենատ գնալը կառքով՝ ևս մեկ արտոնություն: Նրանց ուղևորությունները պրովինցիաներով պաշտոնական էին համարվում՝ արժանանալով պատիվներով ուղեկցման: Սենատորները ազատված էին բազմաթիվ հասարակական պարտավորություններից՝ իրենց հայրենի քաղաքներում: Նրանք և նրանց ժառանգները ունեին իրավունք հանդիսավոր դեպքերում՝ նույնիսկ թաղման ժամանակ, ցուցադրելու իրենց դիմաքանդակները: Քանի որ բոլորը չէ, որ հասցնում էին մարմարե կիսանդրիներ պատվիրել, հաճախ օգտագործում էին մոմե դիմակներ, որոնք տապին շոգ եղանակին հաճախ հալվում էին՝ առաջացնելով զավեշտալի տեսարաններ: Հին հռոմեական երգիծաբան Հովենալը գրում է, որ մոմե դիմակներով «պատ-

վարժան» սենատորներն ունեին հալած ուսեր, կախված ականջներ ու փայթաթված քիթ:

Սենատորական պատիվները նաև պարտավորեցնող էին: Սենատորի արժանապատվությունը ենթադրում էր մեծ ծախսեր՝ ներկայացուցչական նպատակներով. անհրաժեշտ էր տուն ունենալ Հոմոնում, ունենալ սպասավորներ, շքեղ ճաշկերույթներ կազմակերպել, երեխաներին կրթություն տալ հույն լավագույն ուսուցիչների մոտ և այլն: Ուստի պատահական չէ, որ Հանրապետական ժամանակաշրջանի վերջում սենատոր դառնալու համար սահմանվեց բարձր գույքային ցենզ՝ 800 հազար սեստերցի: Իսկ այն, որ սենատորները հաճախ ներգրավված էին պղծումների գործերում պրովինցիաներում, մատնում է նաև նրանց հարստացման աղբյուրները:

Սենատի նիստերը հրավիրում էր բարձր պաշտոն ունեցող մագիստրատը: Սկզբում փողոցներ էին ուղարկում ազդարարների՝ մարդկանց տեղյակ պահելու համար, իսկ հետո սկսեցին փակցնել հատուկ հայտարարություններ (եղիկտներ), իսկ արտակարգ դեպքերում՝ ավելի արագ միջոցներ ձեռնարկել: Եթե սենատորները նիստին չէին ներկայանում առանց արդարացված պատճառի, նրանց տուգանում էին: Երբեմն հատուկ մարդկանց էին ուղարկում նրանց տուն՝ հրավիրելու:

Սենատի նիստերը չէին կարող սկսվել մինչ արևածագը կամ արևամուտից հետո, ուստի սովորաբար սկսվում էին լուսաբացին և տևում մինչև մայրամուտ: Սենատը չունեւ մշտական շենք, քանի որ Ֆորումում հաճախ հրդեհներ էին բռնկվում: Հետևաբար, նիստերը հաճախ անցկացվում էին մոտակա տաճարներում: Երբեմն դրանք տեղի էին ունենում քաղաքից դուրս՝ օրինակ՝ Մարսի դաշտում Ապոլլոնի կամ Բելոնայի տաճարներում, ավելի ուշ՝ Կուրիա Պոմպեյում (որտեղ սպանվել էր Կեսարը), կամ Օգոստոսի պալատի գրադարանում:

Սենատորները, առանց որևէ հատուկ կարգի, նստում էին նստարաններին: Միայն կոնսուլներին էին հատկացվում հատուկ տեղեր դահլիճի կենտրոնում: Նիստի սկզբում նախագահող մագիստրատը զոհաբերություն էր կատարում ու հռչակում, որ աստվածները բարեհաճ են ժողովի գործերին:

Ելույթ ունեցողի համար առանձին բարձր բեմ չէր նախատեսվում: Յուրաքանչյուր ոք խոսում էր տեղից, իսկ ցանկության դեպքում ընթերցում էր նախապես պատրաստված տեքստը: Սենատորի ելույթի ժամանակ մյուսները պարտավոր էին լռել: Կարգուկանոնին հետևում էր նախագահողը՝ լիկտորների օգնությամբ: Նա իրավունք ուներ կարգազանցներին ենթարկել կարգապահական պատժի՝ մինչև բանտարկություն, և ոչ ոք, բացի ժողովրդական

տրիբունից, չէր կարող միջամտել՝ պաշտպանելու ձեռքակալվածին: Հաճախ, երբ նախագահողը կորցնում էր համբերությունը, հրամայում էր ձեռքակալել կարգը խախտողին, իսկ բոլորի հայացքները հույսով ուղղվում էին տրիբունին՝ տեսնելու՝ կօգտագործի՞ արդյոք նա իր վետոյի իրավունքը:

Սենատորներն ունեին խոսքի լիակատար ազատություն և կարող էին պահանջել, որ նախագահողը այս կամ այն հարցը դնի քննարկման: Նախագահողը չպետք է ընդհատեր ելույթ ունեցողին, նույնիսկ եթե վերջինս շեղվում էր թեմայից կամ խոսում էր անկապ: Սակայն, գոյություն ուներ չգրված կանոն՝ ելույթները պետք է լինեին կարճ և բովանդակային: Ունկնդիրների կարծիքով, ելույթի տևողությունը չարաշահած սենատորը կորցնում էր իր արժանապատվության մի մասը, որն ամեն սենատոր բարձր էր գնահատում: Ֆիցերոնի ձևակերպմամբ՝ «Թող սենատորը խոսի ժամանակին, վստահ ու ժողովրդի շահերից ելնելով»: Այնուամենայնիվ, երբեմն սենատորները, փորձելով խուսափել անցանկալի որոշումից, դիմում էին ձգձգման՝ պաշտոնական ընթացակարգերի չարաշահումով (obstructio):

Նիստերի ընթացքում նիստերի դահլիճի դռները բաց էին, սակայն հասարակ մարդկանց մուտքն արգելվում էր. Նրանք բավարարվում էին դրանք լսելով, ինչ դուրս էր լսվում դահլիճից: Երբեմն, հատկապես երբ ընթերցվում էին ռազմական հաղորդագրություններ, դռները փակվում էին, և յուրաքանչյուր սենատոր պարտավորվում էր պահպանել գաղտնիությունը:

Նիստը նախագահողը իրավունք ուներ քննարկման և քվեարկության դնելու նաև օրակարգով չնախատեսված հարցերը: Հարցի մոտիվացիան և էությունը ամրագրվում էին հատուկ փաստաթղթում (relatio): Որպես կանոն, նախագահողի բացման խոսքից հետո սկսվում էին բանավեճերը: Սենատորները խոսում էին նախագահողի հրավերով՝ «Մարկոս Տուլիոս, խոսիր», այն կարգով, որով նրանք գրանցված էին սենատական ցուցակներում: Նախապես ելույթին գրանցվել չէր թույլատրվում: «Կրտսեր» սենատորները պիտի համբերատար սպասեին, մինչև «ավագները» ավարտեին խոսքը: Սակայն, ոչ մեկը չէր կարող ելույթ ունենալ նույն նիստում երկու անգամ: Ժամանակ խնայելու նպատակով երբեմն կոնսուլների, պրետորների, տրիբունների խմբերից ընտրում էին մեկ ներկայացուցչի՝ եթե խմբի բոլոր անդամներն ունեին ընդհանուր տեսակետ:

Մովորաբար արդեն առաջին ելույթ ունեցողներից մեկն առաջարկություն էր ձևակերպում գրավոր, և նրանք, ովքեր համաձայն էին, մնում էին նստած, իսկ հակառակվողները վեր էին կենում: Նախագահողը պարտավոր չէր

«հարցաքննել» բոլոր 300-600 սենատորներին, նա հաճախ պարզապես «զննում» էր մի քանի կարծիք ու հայտարարում բանավեճի ավարտ: Երբեմն էլ նա խորամանկության էր դիմում՝ հարցը քվեարկության դնելով առանց քննարկման: Մակայն, յուրաքանչյուր սենատոր կարող էր նրան ուղղել այս խոսքերը՝ «Այսինչ կոնսուլ, հարցրու», և նախագահողը պարտավոր էր ենթարկվել:

Քվեարկությունն անցկացվում էր ոչ թե ձեռքեր բարձրացնելով կամ գրավոր քվեաթերթերով, այլ՝ «կողմ» և «դեմ» կողմնակիցների աջ և ձախ նստարաններին տեղավորումով: Անհրաժեշտության դեպքում կատարվում էր ձայների հաշվարկ: Բարդ օրենքների դեպքում քվեարկությունը կատարվում էր կետ առ կետ: Անհրաժեշտ նվազագույն քվեների քանակը տարբեր էր՝ կախված հարցից: Տարբեր աղբյուրներում նշվում են մեկ երրորդը, կեսը կամ երկու երրորդը: Օրինակ՝ Կեսարը սահմանել էր քվորում՝ 900 սենատորից՝ 400 քվե:

Երբ բոլոր հարցերն ուսումնասիրված էին, և նիստը փակվում էր, նախագահողը դիմում էր սենատորներին հետևյալ խոսքով. «Հարգելի հայրեր-սենատորներ, այլևս չենք պահում Ձեզ»:

Վերլուծելով մ.թ.ա. II դարի սկզբի՝ Հանրապետության և ժողովրդավարական շարժման առավելագույն բորբոքումի տարիների Հռոմեական սենատի քաղաքական կազմը, կարելի է առանձնացնել մի քանի հստակ նշված խմբեր: Առանձնանում էր պահպանողականների խումբը, որը դեմ էր պետության մեջ ցանկացած փոփոխությանը: Կային «չափավորներ»՝ Սցիպիոնի շրջանակը և նրա կողմնակիցները, ինչպես նաև «ռադիկալ հոսանք», որը գլխավորում էր Ապպիոս Կավդիոսը՝ հանդես գալով ագրարային արմատական բարեփոխումների և ժողովրդավարական փոփոխությունների օգտին ցանկացած միջոցներով: Այս հոսանքից էլ ծնվեցին եղբայրներ՝ Տիբերիոս և Գայոս Գրաքիստները՝ լայն ժողովրդական շարժման առաջնորդները: Սենատում բախման կետերից մեկն էր նաև ռազմական բարեփոխումը, որը սենատը բաժանեց մի քանի խմբերի, ներառյալ «ռազմական ընդդիմությունը»: Ընդհանրապես՝ թե՛ այդ ժամանակաշրջանում, թե՛ հետագայում սենատի կազմը քաղաքական առումով միասեռ չէր: Յուրաքանչյուր խումբ ուներ անվիճելի առաջնորդներ, որոնք պատմության մեջ մտել են որպես օպոիմատների (պահպանողականների) և պոպուլյարների (ժողովրդավարների) առաջնորդներ:

Գրաքիստների շարժումը (մ.թ.ա. II դար) Հռոմեական ժողովրդավարության վերջին մեծ պոռթկումն էր: Մ.թ.ա. 70 թվականին՝ Կրասոսի և Պոմպեոսի կոնսուլության ժամանակ, տեղի ունեցավ տրիբունների լիազորությունների վե-

րականգումը և դատական մշտական հանձնաժողովներում հեծյալների ու պլեբեյական ավագանու ներկայացուցիչների ընդգրկումը: Մրանք «վերևից եկած» բարեփոխումներ էին՝ ուղղված հասարակական լարվածության մեղմացմանը: Ժողովրդավարության մնացորդային պոտենցիալն օգտագործվում էր փառամոլ և իշխանասեր գործիչների կողմից՝ իշխանության հասնելու նպատակով: Թեև մ.թ.ա. 70–63 թթ. ստրուկների ապստամբությունների Փոնին տեղի ունեցած ժողովրդավարական շարժման առանձին դրսևորումները ժամանակավորապես ուժեղացրին պոպուլյարների դիրքերը, սակայն ժողովրդավարությունը, որն արդեն վերջնականապես կտրվել էր պետությունից՝ իբրև պետական քաղաքական ինստիտուտների վրա չհենվող համակարգ, ապրում էր խոր ճգնաժամ: Հռոմեական populus-ը այլևս իրեն չէր դրսևորում կառավարման մարմինների աշխատանքին մասնակցելով կամ քվեարկելով, այլ՝ դուրս գալով փողոցներ, կազմակերպելով ցույցեր ու խռովություններ՝ այն էլ դեռ այն ժամանակ, երբ զանգատներն ու մասնավոր բանակները քաղաքացիական պատերազմների շրջանի մթնոլորտում դեռ չէին հայտնվել:

Չանգվածային քաղաքական մասնակցության համար առավել հարմար կառույց դարձավ բանակը, որը սկսեց առաջադրել իր դիկտատորներին, իսկ հետագայում նաև «զինվորական կայսրերին»: Տասնյակ տարիներ տևած քաղաքացիական պատերազմը քանդում էր Հռոմեական Հանրապետության հիմքերը: Մարիոսի դիկտատուրան, Մուլլայի ռեակցիան արդեն Հանրապետության անկման փուլեր էին:

Հանրապետության ճգնաժամը և նրա անկումը

Կատիլինարների շարժման ճնշումը և «զինվորական խորհրդարանականության» անարգել զարգացումը միայն արագացրին Հանրապետության անկումը և նպաստեցին քաղաքական կյանքում ավտորիտար միտումների ամրապնդմանը: Քաղաքական իշխանությունը սկսեց կենտրոնանալ՝ նախ որպես Կեսարի, Պոմպեոսի և Կրասոսի տրիումվիրատ, ապա՝ Կեսարի միանձնյա իշխանություն, այնուհետև՝ Օգոստոս կայսրության ձևավորում, երբ նա 28 թ. մ.թ.ա. հռչակվեց Հռոմի առաջին կայսր: Ժողովրդավարության ճգնաժամը արագացրեց հանրապետական կարգի կործանումը՝ սենատի անտարբերության պայմաններում: Սենատը, որ նախկինում հանդիսանում էր ժողովրդի իշխանության և հանրապետական ավանդույթների երաշխավորը, աստիճանաբար վերածվեց վերնախավի կերակրատու մարմնի: Այդ վերնախավը «ուժեղ ձեռք» էր փնտրում՝ պայմանով, որ այդ ձեռքից օգտվեր հենց ինքը՝ վերնախավը, և կարգ ու կայունություն հաստատեր:

Պետք է նշել, որ հենց սենատի կազմավորման համակարգն ուներ սկզբնական թերություն՝ այն նախապատվություն էր տալիս ձեռնարկատերերին, խորամանկներին ու խղճի հետ գործարքների պատրաստ մարդկանց, ովքեր ձգտում էին ստանալ այդ պաշտոնը, քանի որ այն բացում էր ճանապարհ դեպի իշխանության գագաթներ: Հռոմում պաշտոնյաները կախված էին ժողովրդի կամքից, թեև նրանց գործունեությունը կարգավորվում էր վարչական իրավունքի բազմազան կանոններով: Իսկ այդ բարդ կանոնները կարելի էր սովորել, շրջանցել կամ խուսափել դրանցից: Այսպիսով, քաղաքացիների համար պաշտոններին հասնելը իրականում շատ պայմանական էր: Խորհրդանշական է, որ պաշտոնի առաջադրումն ու հաստատումը հռոմեացիները կոչում էին ոչ թե «ընտրություններ», այլ «կրեատուրա» (նշանակում վերեւից):

Հռոմեական օլիգարխիան այլևս չէր տեղավորվում Աթենքի ժողովրդավարական հագուստի մեջ: Քանի որ սենատում ուղղակի ընտրություններ չկային, այնտեղ մտնելու համար պայքար սկսվում էր դեռ մագիստրատների ընտրությունների ժամանակ: Սովորաբար ընտրվում էին հարուստ խավի ներկայացուցիչները, ովքեր ունակ էին մեծ նվերներ բաժանել պլեբսին (զանգվածներին): Այդուհանդերձ, նաև քարոզարշավներ էին անցկացվում: Այսպես, Կվինտոս Ցիցերոնը իր հայտնի ելոսրը՝ Մարկոս Ցիցերոնին, խորհուրդ էր տալիս. «Համոզված եղիր, որ սենատը քեզ դատում է ըստ քո նախորդ կյանքի, և քեզ տեսնում է որպես իր հեղինակության պաշտպան: Հեծյալ դասը՝ որպես կարգի ու կայունության պահապան: Իսկ ժողովուրդը, լսելով քո ելույթները դատարաններում ու ժողովներում, քեզ համարում է իր կողմնակից, այսինքն՝ պլեբսի բարեկամ: Թող նրանք հավատան, որ դու կգործես իրենց շահերի համար»: Նախընտրական պայքարում լայն տարածում գտավ «**ինվեկտիվա**» կոչվող արվեստը՝ հակառակորդի, նրա ազգականների, անձնական կյանքի նկատմամբ ուղղված անձնական վիրավորանքների ձևով: Այդ ճանապարհով անցան թե՛ **Ցիցերոնը**, թե՛ **Գայոս Յուլիոս Կեսարը**:

Ցիցերոնը հետևողականորեն իրականացնում էր «մշտական ներկայության էֆեկտը»: Նա գրում էր. «Համոզվելով, որ հռոմեական ժողովուրդը ունի թափանցող տեսողություն, բայց բթամիտ շողոպյուն, ես դադարեցի անհանգստանալ՝ ինչ կլսեն մարդիկ իմ մասին, փոխարենը որոշեցի մշտապես ապրել քաղաքում, մարդկանց աչքի առաջ, և որքան հնարավոր է՝ մոտ գտնվել Հռոմեական Ֆորումին» [4, էջ 143]: Կոնսուլի ընտրությունների ժամանակ, երբ ընթանում էր Կատիլինայի դավադրությունը, Ցիցերոնը ներկայանում է զրահով տոգայի տակ և մեծ պահպանության ուղեկցությամբ՝ ցույց տալու, որ և՛ կոնսուլը, և՛ պետությունը վտանգի մեջ են:

Ցիցերոնի ելույթները դատարանում և սենատում դարձան լեգենդար: Նա անձամբ հոգաց, որ այդ ելույթների տեքստերը պահպանվեն ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ սերունդների համար:

Ինչ վերաբերում է Կեսարին, նա նույնիսկ օգտագործեց իր մորաքրոջ՝ Յուլիայի և առաջին կնոջ՝ Կոռնելիայի հուղարկավորությունները որպես միջոց՝ իր կողմնակիցների աջակցությունը ստանալու և ժողովրդականությունը բարձրացնելու համար: Հիշեցնելով իր ազնիվ ծագման մասին՝ Կեսարը միաժամանակ հանդես էր գալիս որպես պոպուլյարների (ժողովրդամետների) «ոչ ֆորմալ առաջնորդ»: Գալիայում և Բրիտանիայում տարած հաղթանակները ամրապնդեցին Կեսարի վստահությունը: Քաղաքացիական պատերազմում հաղթելով իր փեսա Պոմպեոսին՝ Կեսարը դարձավ անվերապահ բռնապետ՝ ստանալով «հավերժական դիկտատորի» կոչում (dictator in perpetuum) մ.թ.ա. 44 թվականին սենատի կողմից:

Իբրև բարեփոխիչ՝ Կեսարը վերակազմավորում է սենատը՝ նախ և առաջ ավելացնելով նրա անդամների թիվը մինչև 900՝ ներառելով իր մոտիկ սպաներին և նույնիսկ նախկին ազատված ծառաներին: Բացի տարբեր պաշտոնների միաժամանակյա զբաղեցումից՝ նա իրեն վերապահում է նաև գլխավոր քրմապետի կոչումը:

«Հավերժական դիկտատորն» ուներ ոչ միայն արժանիքներ, այլև թուլություններ՝ մասնավորապես սերը երկու սեռերի ներկայացուցիչների նկատմամբ և խիստ ուշադրություն արտաքին տեսքի հանդեպ: Գայոս Սվետոնիոս Տրանկվիլլոսը գրում է, որ Կեսարը հետևում էր իր տեսքին, կտրատում և սափրում էր մազերը: Նրա ճաղատությունը մեծ անհանգստություն էր պատճառում՝ հաճախ զվարճանքի առիթ տալով թշնամիներին: Այդ պատճառով նա սովորաբար մազերը գլխի հետևից առջև էր սանրում, իսկ առավել մեծ հաճույքով ընդունեց իր՝ դափնեպսակ կրելու իրավունքը: Ասում են, որ նա հազնվում էր առանձնահատուկ կերպով՝ կրում էր սենատորական թունիկա՝ ժապավեններով թևերին և միշտ այն թեթևակի կոշիկավորված էր: Նրա արձանը կանգնեցվեց աստվածների արձանների կողքին: Մակայն իրեն կայսր հռչակել «համեստ» Կեսարը թույլ չտվեց: Մ.թ.ա. 44-ի սկզբին, երբ նրա ընկեր Մարկոս Անտոնիոսը Լուպերկալիա տոնի ժամանակ փորձեց թատրոնում, ամբոխի առջև, դնել Կեսարի վրա թագի նմանվող թագադրոշը (դիադեմ), Կեսարը ցուցադրաբար մերժեց այն, ինչը բուռն ծափահարություններ առաջացրեց: Նա հասկանում էր, որ քաղաքացիների մեծ մասը դեռ պահպանում էր հանրապետական տրամադրություններն ու ավանդույթները: Մակայն հենց այդ տարում 60 սենատորների մի

խումբ դավադրություն կազմակերպեց, և Մարտի իդերին (մարտի 15-ին), Պոմպեոսի կուրիայի նիստի ժամանակ Կեսարը սպանվեց դանակի բազմաթիվ հարվածներից: Նրա վերջին խոսքերն էին. «Եվ դու՞, Բրուտ...»:

Ցիցերոնի ճակատագրն էլ ողբերգական եղավ: Նրան սպանեցին մ.թ.ա. 43 թ. Դեկտեմբերի 7-ին՝ 64 տարեկանում: Իր մահը կանխագգայով՝ նա ասել էր. «*Դառն է, որ կյանքի ճանապարհ եմ դուրս եկել շատ ուշ, և որ հանրապետության գիշերը վրա հասավ, մինչև ես կավարտեի իմ ուղին*» [4, էջ 125]: Սպանողները նրա գլուխը տարան Անտոնիոսի մոտ՝ երբ նա էլույթ էր ունենում ժողովրդական ժողովում՝ հենց այն Փորումում, որտեղ տարիներ առաջ Ցիցերոնը փառքով պսակվել էր «հայրենիքի հայր» կոչումով: Պատմում են, որ Անտոնիոսը գլուխը դրել էր իր սեղանին՝ հաճույք ստանալու համար, իսկ նրա կինը՝ Փուլվիան, ասեղներով ծակում էր Հռոմի պատմության ամենանշանավոր հոշտորի լեզուն: Հետո, գլուխը դրեցին ընդհանուրի տեսադաշտում՝ հեռմեացիներին սարսափեցնելու և նրանց մոտ ատելություն առաջացնելու համար: «*Դիտելու ավելի շատ մարդ էր հավաքված, քան երբևէ իր ունեցած երայժների ժամանակ նրան լսում էին*», դառնությամբ նկատում է Ապպիանոսը:

Կեսարի և Ցիցերոնի մահը հանգստություն չբերեց Հռոմին: Զաղաքացիական պատերազմները հաջորդեցին մեկը մյուսին: Առաջին կայսր Ավգուստոսը պահպանեց նախկին պետական հաստատությունները: Մոնարխիան դեռ հանդերձավորված էր հանրապետական զգեստներով: Մենատր դարձավ պետության բարձրագույն մարմինը, նրան տրվեցին նաև ժողովրդական ժողովի որոշ գործառույթներ՝ օրենսդրական և դատական լիազորություններով:

Սակայն արդեն Ավգուստոսի հաջորդը՝ կայսր Տիբերիոսը, հրաժարվեց դեմոկրատական տեսքով ընտրություններից. *destinatio*-ն դարձավ բացահայտ *nominatio*՝ այսինքն՝ թեկնածուների նշանակում առանց որևէ քննարկման [5, էջ 86] Ըստ գտնված վկայությունների, Տիբերիոսի ժամանակ պրետորների ընտրությունը՝ ներկայացնում է այդ ժամանակվա քաղաքական խաղի կանոնները. Տիբերիոսը բացահայտ «ներշնչում էր» սենատի 12 պրետորներից չորսին, իսկ մնացած ութը պետք էր անցնեին «գլուխը քաշելու» գործընթացով, բայց թեկնածուների թիվը հավասար էր ազատ տեղերի թվին, և բոլոր ութը հաջողությամբ ընտրվում էին: Մյուս պատմաբան Կասսիոս Դիոն պատմում է, որ Տիբերիոսը ընտրում էր թեկնածուներին նաև այլ պաշտոնների համար, ուղարկելով նրանց սենատ, «ներշնչելով» հաստատման համար, ապա կազմակերպելով ընտրությունների իմիտացիա

կենտրոնի կամ տրիբունների ժողովներում: Այսինքն, սենատի կազմը ձևավորվում էր յուրաքանչյուրով:

Սենատի ու տիրակալ Կալիգուլայի միջև տարաձայնությունը վերածվեց իսկական հակադրության Կալիգուլոսի սկզբնափուլի ժամանակ: Կալիգուլոսը փորձում էր «դեմոկրատացնել» սենատի կազմը՝ ներգրավելով պրովինցիաների առավել տեսանելի ու բարձր սոցիալական դիրքի մարդկանց, բայց սենատորական դասը, որը միացվել էր չափազանց մեծացրած վարչակազմին, հակադրում էր սենատի ընդլայնմանը: Կայսրը ստիպված էր ստիպել անասաններին հանել սենատից, նրանց ունեցվածքը բռնագրավել, նույնիսկ մահվան դատապարտել: Կալիգուլոսին նման կերպ գործելու էին մղում նաև իշխանասեր զարմուհին՝ Ագրիպինան, որը օրենքին հակառակ նրա կինը դարձավ:

Ինչ պատճառներով էին մշտապես կոնֆլիկտներ ծագում սենատի ու կայսրերի միջև: Ամենագործող սենատին դուր չէին գալիս կայսրերի բացահայտ պահանջները անսահման իշխանության համար: Միաժամանակ, կայսրերի փորձերը հարմարվել կայսերական գաղափարներին՝ հին հանրապետական ավանդույթներին, ստեղծում էին բազմաթիվ կոնֆլիկտներ: Դրանից զատ, «իզական ճանապարհով» անպսակ սենատորներին հանելով, կայսրերը չէին վնասում սենատորական դասին ու նրա իրավունքներին, որոնցից ամենակարևորներն էին մեծ կալվածքները, որոնք ապահովում էին սենատորների տնտեսական անկախությունը կայսրից:

Կոնֆլիկտը սենատի ու կայսրի միջև չվերջացավ անգամ Հռոմեական կայսրության «ոսկե դարում»:

Հանրապետական շրջանից սկսած, սենատորների ցուցակների կազմման իրավունքը փոխանցվեց կոնսուլներից՝ ցենզորներին, որոնք ընտրվում էին կետորիաների կողմից մեկ ու կես տարվա համար, և պետք է պատկանեին պատրիցիներին: Լիցիոնիական օրենքների համաձայն, սենատորների ցանկում տեղ ու ձայն էին ստանում այն անձինք, ովքեր ծառայել էին կուրիալ էդիլ, պրետոր կամ կոնսուլ պաշտոններում: Ցենզորները պարտավոր էին ընդգրկել թեկնածուներին կամ դուրս թողնել յուրջ մեղքերի դեպքում, բայց սենատի որոշմամբ: Այսպիսով, սենատի հիմքը կազմվում էր նրանցից, ովքեր կենտրոնական կառավարման մեջ էին: Այս համակարգի շնորհիվ սենատը պահպանում էր ներկայացուցչական համակարգի գազաթը, որի դեմ չէին համարձակվում կանգնել անգամ կայսրերը: Իհարկե, կայսրը կարող էր բարձրացնել նոր պլեբեյական ընտանիքներ և օգնել նրանց ընտրություններում, սակայն նրանք նույնպես պետք է անցնեին

ընտրությունների գործընթացը, անկախ այն բանից, թե որքան ձևական էր այն:

Առաջին կայսրերի ժամանակ սենատի հիմքը կազմում էր Իտալիայի մունիցիպալ արիստոկրատիան (Անտոնինների ժամանակ մինչև 58%-ը սենատորների), իսկ արևմուտքի սենատորների թիվը նվազում էր, փոխարենը մեծ նշանակություն էին ստանում Արևելքի հարուստ բնակիչները, որոնք մեծ ունեցվածքներ ունեին և պաշտոնները, փաստորեն, գնում էին:

Հռոմեական կայսրության ճգնաժամային տարիներին, հատկապես «ժողովրդական կայսրերի» ժամանակ, սենատը կորցնում է իր ազդեցությունը, փոխարենը՝ ուժեղանում է կայսերական վարչակազմը: Արդեն Սեպտիմիոսի (3-րդ դար) օրոք, բարձրագույն մարմնի դերը խաղում է կայսերական խորհուրդը, (consilium principis), այն գործում էր որպես բարձրագույն մարմին, որի որոշումները փոխարինում էին սենատի որոշումներին: Խորհրդում ներգրավվում էին հայտնի իրավաբաններ, ովքեր մեծ դեր խաղացին Հռոմեական իրավունքի մշակման գործում: Ի վերջո, սենատի «դրամապանակը» էրարիումը, փոխանցվում է Հռոմի քաղաքային «զանձանակին»: Սենատորական պաշտոնների նշանակությունը նվազում է նաև պրովինցիալներում:

«Ժողովրդական կայսրերի» քաղաքական անարխիան մահացու հարված է հասցնում Հռոմեական սենատին, քաղաքական կյանքի կենտրոնը, տեղափոխվում է բանակ, իսկ որպես դրանց հետևանք՝ սեպարատիզմը ի վերջո հանգեցնում է սենատի՝ որպես կառավարման մարմնի կործանմանը:

Նշենք նաև, որ Դիոկլետիանոսի ժամանակ քաղաքական համակարգը և՛ ձևով և՛ բովանդակությամբ արդեն արևելյան տիրապետություն էր: Չնայած սենատորական դասը մնում էր բարձրագույն դաս, սակայն, սենատի դերը սահմանափակվում էր խաղերի կազմակերպմամբ և սենատորների հարկերի վերահսկմամբ: Ավելին, սենատի բոլոր որոշումները պահանջում էին կայսրի հաստատումը: 330 թվականին կայսրության մայրաքաղաքը տեղափոխվեց Կոնստանդնուպոլիս: Այդպես ավարտվեց գրեթե հազարամյա Հռոմեական սենատի պատմությունը:

Իր ժամանակին Ցիցերոնը միտք է արտահայտել, ըստ որի՝ «ժողովուրդը ոչ թե ցանկացած մարդկանց խումբ է, այլ մարդկանց միավորում, որոնք կապված են իրավունքի համաձայն և ընդհանուր հետաքրքրություններով» [6, էջ 651]: Հռոմեական սենատը չէր կարող արտահայտել այդ համաձայնությունը և ընդհանուր հետաքրքրությունները, և դեռ ավելին՝ փորձել դրանք իրականացնել: Իսկ ժողովրդական շարժումը շատ անհամակարգված և քիչ կազմակերպված էր, որ կարողանար արդյունավետ դիմադրություն ցույց տալ սենատին և «ժողովրդական կայսրերին»:

Նկատենք, որ Ցիցերոնի փիլիսոփայաիրավական գաղափարները (և առաջին հերթին՝ պետության իրավունքի բնույթի, պետության՝ որպես «ընդհանուր իրավակարգի» և իրավական համայնքի, բնական իրավունքի, արդարության և ճշմարիտ իրավունքի մասին և այլն) էական ազդեցություն ունեցան հետագա մտածողների վրա և պահպանելով իրենց արդիականությունը մինչև մեր օրերը՝ գտնվում են ժամանակակից այն հետազոտողների ուշադրության կենտրոնում, որոնք իրավական պետության կողմնակիցներ են, բնական իրավունքի և արդարության՝ որպես պոզիտիվ իրավունքի անհրաժեշտ չափանիշ և դրան համապատասխան արադար ու անարդար օրենքները տարբերակող մեկնաբաններ են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Парламенты мира. Сб. – М.: Интерпракс. 1991.
2. **Արշակյան Ա.** Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն. – Եր.: «Նաիրի». 2003.
3. Политические деятели античности, средневековья и нового времени. – Л. 1983.
4. **Цицерон.** Диалоги. О государстве. О законах. – М., 1996.
5. **Утченко С. Л.** Древний Рим. События, Люди, Идеи. – М., 1969.
6. **Ներսեսյանց Վլ.** Իրավունքի փիլիսոփայություն. – Երևան: «Արցախ» հրատարակչություն, 2025:

Տժնա/Հանձնվել է՝ 03.06.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 10.06.2025

Принята/Ընդունվել է՝ 17.06.2025